ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԱՏԻԿՅԱՆ ԱՆԻ ԱՆԴՐԱՆԻԿԻ

# ՇՆՈՂ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԸ ԵՐԿԱԹԻ ԴԱՐՈՒՄ
# (ԸՍՏ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՏՎՅԱԼՆԵՐԻ)

**Է.00.03 - «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության**

## ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝

**պ.գ.դ., պրոֆ. Հայկ Գրիգորի Ավետիսյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**պ.գ.դ. Գարեգին Սահակի Թումանյան**

**պ.գ.թ., դոցենտ Արտակ Վարդգեսի Գնունի**

Առաջատար կազմակերպություն՝

**Հայաստանի պատմության թանգարան**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. օգոստոսի 4-ին, ժամը՝ 14:00-ին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲԿԳԿ-ի 007 «Հնագիտության և ազգագրության» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0025, ք. Երևան, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026 թ. հուլիսի 4-ին:
Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

**պ.գ.դ. Արսեն Էդուարդի Հարությունյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Սույն աշխատանքում ուսումնասիրվում են ՀՀ Լոռու մարզի Թեղուտի արդյունաբերական նշանակության գունավոր մետաղների՝ պղնձի և մոլիբդենի հանքավայրի տարածքում գտնվող երկաթեդարյան դամբարանադաշտերը: Դրանք սփռված են հանքավայրի տարածքով անցնող Շնող գետի մերձակայքում: Շնող գետը Դեբեդի մեծ վտակներից մեկն է և սկիզբ է առնում Գուգարքի լեռնաշղթայի հյուսիսահայաց անտառապատ լանջերից, անցնում Թեղուտ և Շնող գյուղերի տարածքով, աջ կողմից միանում Դեբեդին, ծ.մ. 520 մ բարձրության վրա:

Վերջին տարիներին այնտեղ պեղվել է 311 դամբարան, որոնցից մեկը՝ վաղ բրոնզեդարյան (Փիջուտ № 17), ինը՝ ուշ բրոնզեդարյան (Դուքանաձոր № 1, 2, 3, 4, և Բովեր 1 № 47, 48, 49, Թեղուտ 1 № 1, 2), երեքը՝ միջնադարյան (Բաղերի ճալա № 12, 13, 14), 298 դամբարան պատկանում է երկաթի դարին, որոնցից սույն աշխատանքում քննարկվում են 131-ը (43,96%):

**Հետազոտության արդիականությունը.** Մ.թ.ա. II հազարամյակի վերջը և I հազարամյակի առաջին կեսը Առաջավոր Ասիայի և Հարավային Կովկասի պատմամշակութային զարգացման ամենադինամիկ փուլերից են: Այս ժամանակաշրջանը բնութագրվում է երկաթի մասսայականացմամբ, ինչը հանգեցրեց արտադրողական ուժերի կտրուկ աճի և սոցիալ-տնտեսական լանդշաֆտի արմատական փոխակերպումների: Վերածևավորվում է Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը՝ ուղեկցվելով նոր հզոր կազմավորումների ի հայտ գալով: Ասորեստանյան կայսրության էքսպանսիան դեպի հյուսիս և Եփրատ-Տիգրիսյան գոտու վերահսկողության համար մղվող պայքարը ստիպում են լեռնային շրջանների էթնոքաղաքական միավորումներին համախմբվել՝ արտաքին նվաճումներին դիմակայելու համար: Այս երևույթը պետք է հանգեցներ նաև Էթիունյան համադաշնության ձևավորմանը: Սեպագիր աղբյուրներում հիշատակվող «Նաիրի երկրների» դաշնակցային հարաբերությունները, էթիունյան համադաշնության և հզորացող Վանի թագավորության (Ուրարտու) առճակատումը հանգեցնում են բնակեցման նոր մոդելների ձևավորմանը: Մշակութային լանդշաֆտի տրանսֆորմացիան դրսևորվում է անցումով կիսաքոչվորական կենսագործունեությունից դեպի դժվարամատչելի, ամրացված բերդ-ամրոցների համակարգին, ինչը հատկապես բնորոշ էր Հյուսիսային Իրանին, Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան շրջաններին և Հարավային Կովկասին: Այս գործընթացները սերտորեն շաղկապված են տնտեսական վեկտորների փոփոխության հետ. հումքի աղբյուրների (հատկապես մետաղի) նկատմամբ վերահսկողությունը դառնում է գերակա խնդիր: Հենց այս համատեքստում է դրսևորվում Շնող-Թեղուտ տարածաշրջանը՝ որպես եզակի հանգույց, որտեղ հյուսիսկովկասյան, կենտրոնաանդրկովկասյան և հարավային (ուրարտական) մշակութային տարրերը միահյուսվում են տեղական հարուստ հանքարդյունաբերական ավանդույթների հետ:

Վերջին տասնամյակներում Հայաստանի Հանրապետության տարածքի երկաթի դարաշրջանի վերաբերյալ հնագիտական ուսումնասիրությունները նոր տվյալներ են շրջանառում, ինչպես, օրինակ, Լոռի բերդի դամբարանների դեպքում է: Ինչպես նախկին, այնպես էլ ներկա ուսումնասիրությունների արդյունքների մեկտեղումը թույլ է տալիս հնարավորինս ամբողջական ու հիմնավոր պատկերացում ունենալ Հին Հայաստանի հնաբնակների կենսատարածքի, բնակչության կենսակերպի, մշակութային փոխազդեցությունների վերաբերյալ՝ նորովի ներկայացնելով տարածաշրջանի սոցիալ-մշակութային կյանքը: Ներկայումս ուսումնասիրությունների շարքում առանձնահատուկ կարևորություն ունեն առանձին դամբարանադաշտերի համակարգային վերլուծությունները: Լավագույն օրինակներից են Թալինի, Քարաշամբի, Լոռի բերդի, Լճաշենի և այլ հայտնի հնավայրերի պեղումներն ու հրատարակությունները, որոնք ոչ միայն ավելացրել են տվյալ ժամանակաշրջանների նյութական մշակույթի վերաբերյալ տեղեկությունները, այլև հնարավորություն են տվել բացահայտելու տարածաշրջանային փոխակերպումների ընթացքը՝ անդրադառնալով բնակչության սոցիալական կազմին ու կառուցվածքին: Մասնավորեցնենք այն հանգամանքը, որ դամբարանադաշտերի տարբեր աշխարհագրական և մշակութային գոտիներում գտնվելու պարագայում հնարավորություն է ստեղծվում համեմատական վերլուծությունների միջոցով վեր հանել միջտարածաշրջանային ընդհանրություններն ու տարբերությունները: Այս առումով առանցքային կարևորություն ունեն առանձին դամբարանադաշտերի ուսումնասիրությունները: Ըստ այդմ՝ կոնկրետ համայնքների դամբարանադաշտերի ուումնասիրությունը կարևոր գործիք է դառնում վաղ հասարակությունների սոցիալ-մշակութային առանձնահատկությունները բացահայտելու գործում: Դամբարաններում հայտնաբերված նյութական մշակույթի բաղադրիչները՝ խեցեղենը, զենքերը, գործիքները, պերճանքի առարկաները և ծիսական նշանակություն ունեցող իրերը, առաջնային աղբյուրներ են, որոնք թույլ են տալիս որոշակիորեն վերակազմել ոչ միայն թաղման ծեսը (այսուհետ՝ ԹԾ), այլև պատկերացում կազմել բնակչության սոցիալական շերտավորման, դրա հիմնական խմբերի և ընդհանուր մշակութային փոխազդեցությունների մասին:

Այս համատեքստում Շնողի տարածաշրջանի հնագիտական հուշարձանների, մասնավորապես՝ Բաղերի ճալա, Բարձրյալ, Բովեր 1, Բովեր 2, Բրագձոր, Թեղուտ 2, Խառատանոց, Շեկ աղբյուր և Փիջուտ դամբարանադաշտերի համակարգված հետազոտությունը կարևորվում է մի քանի առանցքային գործոններով.

1. *Աշխարհագրական դիրքը և ռազմավարական նշանակությունը:* Տարածաշրջանը գտնվում է Կուրի և Արաքսի ավազանները կապող բնական միջանցքում, ինչը պատմականորեն ծառայել է որպես առևտրային և մշակութային ուղիների հատման հանգույց: Սա հնարավորություն է տալիս դիտարկել մշակութային փոխառությունների և ազդեցությունների տարածման դինամիկան:

2. *Հումքային բազա և մենաշնորհ:* Տարածաշրջանի մերձակայությունը պղնձի և երկաթի հանքավայրերին կանխորոշել է տեղի բնակչության դերը մետաղամշակման և արտահանման գործընթացներում: Տարբեր ժամանակափու-

լերի դամբարաններից հայտնաբերված մետաղյա գտածոների բազմազանությունը վկայում է բարձր զարգացած մետաղագործական ավանդույթների մասին:

3. *Քաղաքական փեղաշարժեր և հակամարտություններ:* Ուրարտական պետության ընդլայնումը դեպի հյուսիս և բախումը Էթիունիի հետ, ինչպես նաև կիմերական ու սկյութական արշավանքներն իրենց անմիջական հետքն են թողել տարածաշրջանի նյութական մշակույթի վրա: Շնողի հնավայրերի նյութը թույլ է տալիս վերլուծել տեղական մշակույթի փոփոխություններն արտաքին քաղաքական ազդակների ներքո:

4. *Սոցիալ-ժողովրդագրական պատկեր:* Հետազոտվող 131 դամբարանի մարդաբանական տվյալների վերլուծությունը հնարավորություն է տալիս վերականգնել հասարակության սոցիալական կառուցվածքը և կենսակերպի առանձնահատկությունները:

**Ուսումնասիրության պատմությունը.** Շնողի տարածքում առաջին հնագիտական ուսումնասիրությունը կատարել է Վ. Ավետյանը, որը մեկնարկել է դեռևս 1972 թ., երբ Շնողի տարածքի հին հուշարձաններն ուսումնասիրելու նպատակով (1972 և 1990 թթ.) պեղումներ է կատարել Ղարաքոթուկ և Մեծ ուրթատեղ սարերում: Հետագա ուսումնասիրությունները շարունակվել են 2009 թ., որին նախորդել էր Թեղուտի հանքի շահագործման խնդիրը: Այդ ընթացքում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում նախապատրաստական աշխատանքներ են կատարվել հանքավայրի տարածքում գտնվող հուշարձանների պահպանության և ուսումնասիրության համար, կատարվել է տեղազննություն, կազմվել՝ հուշարձանների նախնական ցանկ: Այդ աշխատանքների հիմքում եղել է Վ. Ավետյանի կազմած «Լոռու մարզի Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքի հնագիտական հուշարձանների մասին» տեղեկանքը: Հնագիտական արշավախումբն աշխատել է 2009-2021 թթ., հայտնաբերվել է 54 հուշարձան (արշավախմբի ղեկ.՝ Սուրեն Հոբոսյան, անդամներ՝ Սեդա Դևեջյան, Ռուբեն Բադալյան, Արմինե Հարությունյան, Աստղիկ Բաբաջանյան, Լիլիթ Տեր-Մինասյան, Անուշ Ամսեյան, Ռուզան Փալանջյան, Ռուբեն Դավթյան, Անահիտ Խուդավերդյան, Ինեսա Հովսեփյան, Գագիկ Խաչատրյան, Գարիկ Փրվեյան, Հայկ Հայդոսյան, Անի Սարատիկյան): Պեղումների ընթացքում հայտնաբերված բոլոր գտածոները ՀԱԻ-ում համապատասխան լաբորատոր մշակում անցնելուց հետո հանձնվել են Հայաստանի պատմության և Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարաններին և պահվում են համապատասխան հնագիտական ֆոնդերում:

**Հետազոտության աղբյուրագիտական հենքը.** Աշխատանքը հիմնված է ինը դամբարանադաշտի, 131 դամբարանի և ավելի քան 1200 գտածոյի համակողմանի ուսումնասիրության վրա: 131 դամբարանի բաշխվածությունը, ըստ դամբարանադաշտերի, հետևյալն է. Բաղերի ճալա (29 դ., 21.97%), Բարձրյալ (30 դ., 22.73%), Բովեր 1 (27 դ., 20.45%), Բովեր 2 (14 դ. 10.61%), Թեղուտ 2 (6 դ., 4.55%), Բրագձոր (8 դ., 6.06%), Խառատանոց (3 դ., 2,30%), Շեկ աղբյուր (4 դ., 3.03%), Փիջուտ (10 դ., 7.58%):

**Հետազոտության նպատակն ու խնդիրները.** Սույն աշխատանքի հիմնական նպատակն է համակարգել և վերլուծել պեղված դամբարանադաշտերի հնագիտական և մարդաբանական նյութը՝ վերակազմելու համար տարածաշրջանի պատմամշակութային համապատկերը՝ մ.թ.ա. II-հազարամյակի ավարտին-I հազարամյակի առաջին կեսին, պարզելու լեռնաշխարհի հյուսիսարևմտյան շրջանների դերը լայնածավալ քաղաքական ու տնտեսական գործընթացներում:

Այս նպատակին հասնելու համար կարևորել ենք հետևյալ հետազոտական խնդիրները.

1. Ուսումնասիրել ԹԾ-ի առանձնահատկությունները (կմախքի դիրք, կենոտաֆներ, ԹԾ-ին առնչվող այլ տվյալներ):

2. Իրականացնել գտածոների (խեցեղեն, մետաղ, քար և այլ նյութեր) տիպաբանական դասակարգում և վիճակագրական վերլուծություն:

3. Գնահատել երկաթե և բրոնզե զենքերի հարաբերակցությունը՝ զինատեսակների էվոլյուցիան հասկանալու համար:

4. Վերլուծել խեցեղենի ձևաբանական և զարդանախշման առանձնահատկությունները:

5. Այս խնդիրների շրջանակում՝ առկա տվյալների համակարգված վերլուծությամբ, Շնողի հնավայրերի օրինակով լուսաբանել այն համընդհանուր փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել տարածաշրջանում երկաթի դարաշրջանի մեկնարկին:

**Ուսումնասիրության մեթոդաբանությունը.** Աշխատանքում կիրառվել են հնագիտական նյութի հետազոտման համալիր մեթոդներ՝ համադրական-տիպաբանական վերլուծություն, վիճակագրական տվյալների մշակում (քանակական սանդղակների և գծապատկերների կիրառմամբ), ինչպես նաև քարտեզագրական և հանույթային վերլուծություն՝ տարածական տեղաբաշխումը պարզելու համար: Կիրառել ենք նաև համեմատական մեթոդը: Դամբարանների թվագրությանն առնչվող տվյալները համադրել ենք ռադիոածխածնային մեթոդի արդյունքում ստացված արդյունքների հետ: Աշխատանքում օգտագործել ենք նաև GIS քարտեզագրման մեթոդը, որի շնորհիվ հնարավոր է շոշափել այնպիսի հարցեր, ինչպես, օրինակ, տարածքի կազմակերպման և յուրացման հարցը, ամրոցների, դամբարանադաշտերի և դրանց շրջակա հուշարձանների առկայությունն ու հավանական կապը և այլն:

**Աշխատանքի գիտական նորույթն ու գործնական նշանակությունը.**

Առաջին անգամ իրականացվել է տարածաշրջանի դամբարանադաշտերի նյութերի համադրական քննություն, ինչը թույլ է տվել վերականգնել տեղի բնակչության սոցիալ-տնտեսական կյանքի ամբողջական պատկերը:

1. *Մարդաբանական և հնագիտական տվյալների սինթեզ.* 131 դամբարանների պեղումներից ստացված մարդաբանական տվյալների (սեռատարիքային կազմի որոշում) համադրումը թաղման գույքի հետ հնարավորություն է տվել վերհանել հասարակության ներքին շերտավորման և մասնագիտական կողմնորոշման (զինվորականություն, արհեստավորներ) նոր մանրամասներ:

2. *Տեխնոլոգիական անցման լուսաբանում.* Ցույց է տրվել բրոնզից երկաթին անցման փուլի տեխնոլոգիական առանձնահատկությունները տեղական մետաղագործական դպրոցի շրջանակում, որն անմիջականորեն կապված է հարակից հանքավայրերի շահագործման հետ:

3. *Զարդամոտիվների մեկնաբանություն.* Խեցեղենի զարդանախշման վիճակագրական վերլուծությունը թույլ է տվել հստակեցնել ժամանակաշրջանին և տվյալ տարածքին հատուկ հիմնական զարդամոտիվներն ու դրանց տարածվածությունը:

**Պաշտպանության ներկայացվող դրույթները.**

1. *Տարածաշրջանի ռազմավարական նշանակությունը.* Շնողի հնավայրերը Կուր-Արաքսյան «միջանցքի» առանցքային հանգույցներից են, որոնք ապահովել են մշակութային և առևտրային հաղորդակցությունը լեռնային և հարթավայրային գոտիների միջև:

2. *Մետաղագործական մենաշնորհը.* Հնագիտական գտածոների (հատկապես զենքերի և զարդերի) որակական և քանակական ցուցանիշները հիմնավորում են այն դրույթը, որ տարածաշրջանը եղել է պղնձի արդյունահանման և մշակման ինքնուրույն կենտրոն, որն ապահովել է իր կարիքներն ու մասնակցել միջտարածաշրջանային փոխանակմանը:

3. *Լանդշաֆտային տրանսֆորմացիան.* Մ.թ.ա. I հազարամյակի սկզբին դիտվում է բնակեցման համակարգի փոփոխություն (ամրացված բարձրադիր կետերի յուրացումը), որը պայմանավորված էր Ուրարտու-Էթիունի աշխարհաքաղաքական բախումների և կիմերա-սկյութական արշավանքների վտանգով:

4. *Սոցիալական կառուցվածքի բարդացումը.* Դամբարանային համալիրների կառուցվածքային տարբերությունները և զենքի առկայությունը թաղումներում վկայում են ռազմականացված վերնախավի ձևավորման և սոցիալական հիերարխիայի խորացման մասին:

5. *Մշակութային ինքնությունը.* Լինելով Լճաշեն-մեծամորյան մշակույթի մաս՝ Շնողի հնագիտական նյութը պահպանում է ինքնատիպ տեղական դիմագիծ, ինչն արտահայտվում է ԹԾ-ի մի շարք հատկանիշների առանձնահատկություններով և խեցեղենի զարդարման ավանդույթներում:

**Աշխատանքի կառուցվածքը.**

Աշխատանքը բաղկացած է բուն տեքստից (108 էջ), գրականության ցանկից (392 միավոր) և երկու հավելվածից: Հավելված 1-ում (114 էջ) ներառված են դամբարանադաշտերի կոորդինատային սանդղակը, դամբարանների հնագիտական հատկանիշների ցանկը, զարդանախշերի աղյուսակը, դամբարաններից ստացված ռադիոածխածնային տվյալները, վիճակագրական գծապատկերները, քարտեզներն ու հանույթները: Հավելված 2-ում (399 էջ) ներառված են՝ լուսանկարները (դամբարանների և գտածոների), գծանկարներն (գտածոների) ու չափագրությունները (դամբարանների ու դամբարանադաշտերի):

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են հետազոտության նպատակն ու խնդիրները, ժամանակագրական և աշխարհագրական սահմանները, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, գիտական նորույթն ու գործնական նշանակությունը:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԴԱՄԲԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԸ

Առաջին գլխում ներկայացված է դամբարանային համալիրների երկրաբանական, աշխարհագրական համառոտ բնութագիրը, դամբարանների կառուցվածքը, թաղման ձևերն ու ծեսը:

Շնող գետի ստորին հոսքի ավազանում են գտնվում ուսումնասիրվող հնավայրերը: Երկրաբանորեն դրանք տեղաբաշխված են Դեբեդի կամարաձալքի Սոմխեթի սեգմենտի հյուսիսարևելյան պարփակման գոտում: Տարածքը առանձնանում է բազմաշերտ երկրաբանական կառուցվածքով, որը նպաստել է ինչպես հանքային հարստությունների տարաժամանակյա պարբերաբար օգտագործմանը, այնպես էլ մարդու բնակության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը: Դամբարանները գտնվում են ծ.մ. 655-965 մ բարձրության սահմաններում: Դամբարանադաշտերն ունեն բավականին խիտ դասավորություն, դրանք միմյանցից հեռու են միջինը 300-500 մ (որոշ դեպքերում՝ 1000-1500 մ), իրարից ամենահեռու դամբարանադաշտերի՝ Փիջուտի և Շեկ աղբյուրի միջև հեռավորությունը մոտ 3500 մ է: Դամբարանադաշտերի զբաղեցրած ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 9,23 հա, դամբարանների խտությունը 1 հա-ի վրա կազմում է մոտ 32 դամբարան: Հուշարձանների տեղաբաշխման լանդշաֆտային չափորոշիչները (Digital Elevation Model - DEM) արձանագրում են հետևյալ օրինաչափությունները.

1. Հուշարձանների 85%-ը կենտրոնացված է միևնույն հորիզոնականների վրա, ինչը խոսում է կայուն բնակեցման գոտու մասին:

2. Դամբարանադաշտերի մեծ մասը տեղադրված է այնպես, որ ապահովվի տեսողական կապը համապատասխան բնակատեղիի կամ ամրոցի հետ (Տեսանելիություն Viewshed Analysis): Սա ստեղծում է «հսկվող լանդշաֆտի» տպավորություն:

3. Viewshed վերլուծությունը ցույց է տալիս, որ դամբարանադաշտերի զգալի մասը գտնվում է այնպիսի տեղանքներում, որտեղից բացվում է լայն տեսադաշտ դեպի Շնող գետի հովիտը և հարակից տարածքները: Որոշ դեպքերում դամբարանադաշտերը տեսանելի են միմյանցից, ինչը ենթադրում է, որ դրանք եղել են նույն տարածքային համակարգի մաս:

Տեսանելիության այս համակարգը կարող է վկայել տարածքի սոցիալական կազմակերպման մասին, երբ առանձին համայնքները վերահսկել են գետի հովտի տարբեր հատվածներ, իսկ դամբարանադաշտերը ծառայել են որպես տարածքային նշաններ և համայնքային ինքնության ցուցիչներ: Կարելի է սահմանել, որ երկաթի դարաշրջանում Շնող գետի ավազանի յուրացումը չի սահմա-

նափակվել միայն տնտեսական կամ պաշտպանական գործոններով: Դամբարանադաշտերի տեղադրությունը և դրանց կապը բնակավայրերի ու բնական կողմնորոշիչների հետ մատնանշում են լանդշաֆտի սիմվոլիկ կազմակերպման բարդ համակարգի մասին: Շնողի ավազանի դամբարանադաշտերը (Շեկ աղբյուր, Բրագձոր, Փիջուտ) տեղադրված են բարձրադիր հրվանդանների վրա: Նման տեղադիրքն ապահովել է «ապրողների» և «մեռյալների» աշխարհների կապը: Սա երկու աշխարհների փոխադարձ վերհսկողության խորհրդանշական ընկալումների վկայություն կարելի է համարել: Բարձրադիր դիրքը թույլ է տվել բնակավայրից կամ ամրոցից մշտապես տեսանելի պահել նախնիների հանգստարանները: Սա ստեղծում է «ներկայության» զգացողություն, որտեղ մահացածների աշխարհը մասնակից է համայնքի ամենօրյա կյանքին: Կարծում ենք, որ դամբարանադաշտերի տեղակայումը բարձրադիր լանջերին և հրվանդաններին պայմանավորված է եղել մի քանի գործոններով.

1. Տեսանելիություն և տարածքի վերահսկում:
2. Դամբարանների պաշտպանվածության ապահովում:
3. Երկրագործության համար պիտանի հողերի անձեռնմխելիություն:
4. Սրբազան լանդշաֆտի ձևավորում:

Տարածքը բնակեցնողների հնագույն թաղումները, որոնք հնարավոր են թվագրել **մ.թ.ա. 1150-1050 թթ.**, պեղվել են Բաղերի ճալայում (դամբ. №№ 2, 3, 11, 15, 18, 20, 22, 24): Հատկանշական է, որ № 22 դամբարանից ստացված ռադիոածխածնային թվագրությունը նույնպես մատնանշում է այդ ժամանակահատվածը: Ժամանակագրական այս սահմաններում կարելի է թվագրել նաև Բրագձորի № 2 դամբարանը: Տարածաշրջանի մինչուրարտական շրջանի ակտիվ բնակեցման ժամանակաշրջանն անկասկած եղել է մ.թ.ա. **1050-820/ 780**-ական թվականները: Պեղված գրեթե բոլոր դամբանախմբերում ունենք այդ ենթափուլին բնորոշ գույքի կազմով համալիրներ (Բաղերի ճալա՝ դամբ. №№ 1, 4-10, 16, 17, 19, 21, 23, 25-28, 31-33, Բարձրյալ՝ դամբ. №№ 1, 8, 9, 17, 18, 22, 23, 85, 91, 92, Բովեր 1՝ դամբ. №№ 6, 12, 15, 19, 21, 22, 24, 29, 31, 33, 34, 36, 40, 42,43, 45, 50, 54-57, Բովեր 2՝ դամբ. №№ 15, 29, 34, Բրագձոր՝ դամբ. №№ 1, 3-8, Խառատանոց՝ դամբ. №№ 5, 8, 9, Թեղուտ՝ դամբ. №№ 1-6, Շեկ աղբյուր՝ դամբ. №№ 1-4):

Դամբարանդաշտերը ձևավորվել են աստիճանական, այդ գործընթացն սկսվել է մ.թ.ա. XII դարի երկրորդ կեսից և շարունակվելով մինչև մ.թ.ա. IX դարի ավարտը: Մ.թ.ա. IX դարի վերջերից նախկինում գործած դամբարանդաշտերի մեծ մասում թաղումներ չեն կատարվել, բացառությամբ դամբարանադաշտերի կենտրոնական խմբի: Միաժամանակ տարածաշրջանի հարավային հատվածում ձևավորվում է մի նոր դամբարանադաշտ՝ Փիջուտը: Եթե փորձենք մեկնաբանել դամբարանադաշտերի այս գոտու ձևավորման ընթացքը, կարելի է մասնավորել հետևյալը: Դամբարանադաշտերի ձևավորման սկզբնական շրջանում (I փուլ՝ մ.թ.ա. XII-XI դարեր) սկսել են ձևավորվել փոքր ընտանեկան կամ տոհմային դամբարանադաշտեր: Տարածական առումով դրանք ըստ ամենայնի, գտնվել են բնակավայրերից զգալի հեռավորության վրա, զբաղեցնելով առանձին բլուրների կամ բարձրադիր դարավանդների որոշակի հատվածներ: Երկրորդ փուլում (II փուլ՝ մ.թ.ա. XI-IX/VIII դարեր) գործ ունենք բավականին խիտ թաղումներով ներկայացող ձևավորված դամբարանադաշերի հետ, որոնք սփռված են Շնողի

ավազանի զգալի տարածքների վրա: Մեծ հավանականությամբ դրանք պատկանել են նույն բնակչությանը կամ նույն տարածաշրջանային համայնքային համակարգին: Այս փուլում, հավանաբար, դամբարանադաշտերով ձևավորվում է **մեկ հիմնական սրբազան գոտի (սրբազան լանդշաֆտ),** որը կապված էր Շնող գետի ավազանի բնակավայրերի հետ: Հարկ է նշել նաև, որ նշված փուլի դամբանային համալիրների շարքում ունենք համեմատաբար վաղ՝ մ.թ.ա. XI-X և ուշ՝ մ.թ.ա. IX-VIII հատկանիշներով ներկայացված գոյքի կազմով թաղումներ: Դամբարանային համալիրների նման ժամանակագրությունը ցույց է տալիս, որ որոշ դամբարանադաշտեր շարունակել են օգտագործվել ավելի ուշ ժամանակներում, իսկ նոր դամբարաններ հայտնվում են արդեն նույն տարածքի այլ հատվածներում: Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ խնդրո առարկա դամբանադաշտերը ձևավորվել են աստիճանաբար՝ սկզբում որպես փոքր դամբարանային խմբեր, այնուհետև ընդարձակվել և բաժանվել են հատվածների, իսկ ավելի ուշ ժամանակաշրջանում ձևավորվել են նոր դամբարանադաշտեր այլ տարածքներում:

Դամբարանները կառուցվածքով հիմնականում միատիպ են, կառուցված են գրեթե կանոնավոր շարքերով: Ունեն ուղղանկյուն հատակագիծ, պատերը կառուցված են տարբեր չափերի քարաբեկորներով, որպես կանոն հիմնապատի համար օգտագործվել են առավել խոշոր բեկորներ, իսկ զրահի հատվածում՝ ավելի մանր, ծածկասալերը համեմատաբար հարթ, խոշոր քարաբեկորներ են: Բացառություն է Փիջուտի № 26 դամբարանը, որը հիմնահողային է: Դամբարանների վրա ծածկասալից զատ, արևմտյան հատվածում, կա քարե լիցք կամ զրահ, որը մոտ 30-40 սմ երկարությամբ քարերի կիսակլոր կույտ է: Դամբարաններն ուղղված են արևելք-արևմուտք, հազվադեպ՝ հյուսիս-հարավ, արտաքուստ միջինը ունեն մոտ 2 մ երկարություն և 1,5 մ լայնություն, խցի չափերը միջինում ունեն մոտ 1,20-30 մ երկարություն, 80-90 սմ լայնություն, 60-70 սմ խորություն: Ինչպես նշվեց, որոշ դեպքերում պատերը շարված են երկարավուն, հարթ մակերեսով, ուղղահայաց դիրքով դրված խոշոր անդեզիտի բեկորներով, որոշ դեպքերում՝ գետաքարերով: Շարվածքը խիտ է, քարերն՝ ուղղահայաց, ցցված դիրքով: Այն դեպքում, երբ քարի բարձրությունը չի բավարարել պատի հավասարության համար, ստորին կամ կամ վերին մասում լրացվել է հորիզոնական դիրքով դրված քարերով: Որպես կանոն ծածկված են 2-4 սալերով (եթե անխաթար են պահպանված): Օգտագործվել են հիմնականում հետևյալ քարատեսակները. գրանոդիորիտ, կվարցային դիորիտ (բաց մոխրագույն, խոշորահատիկ), վերջինս կազմում է մոտավորապես 60%, բազալտը՝ 20%, հրաբխանստվածքային դացիտ կանաչավուն ապարը 10% և գետաքարերը՝ 10%: Որպես ծածկասալ օգտագործվել է հիմնականում տեղական բազալտը:

Այսպիսով, Շնող գետի ավազանի դամբարաններն արտաքուստ քարահողային լիցքով ոչ մեծ թմբեր են: Խցերի կառուցվածքով նույնատիպ են և պատկանում են քարարկղային դամբարանախցերի հայտնի ձևերին: Թաղումները ծածկվել են դամբարանախցի լայնքով երկու և ավելի սալերով: Պեղված քարարկղային խցերի պատերը շարված են երկու և ավելի շարք մշակված քարերով: Դրանք հիմնականում անհատական թաղումների շարքին են դասվում և իրենց լայն զուգահեռներն ունեն Հայաստանի տարածքի երկաթի դարի դամբարանային համալիրներում:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
## ԹԱՂՄԱՆ ԳՈՒՅՔԸ

Սույն գլխում քննարկվում է թաղման գույքը, այն խմբավորելով ըստ որոշ հատկանիշների: Առաջին հերթին նկատի ենք ունեցել պատրաստման հումքը, ապա դրանք խմբավորել ըստ տիպերի: Շնող գետի ավազանի դամբարանների գտածոները վերաբերում են վաղ, զարգացած և ուշ երկաթի դարերին (մ.թ.ա. XII-X, IX-VIII, VII-VI դդ.):

Առաջին խմբում կավե առարկաներն են, որոնց բաժանել ենք ըստ քանակաշատության և ձևաբանական բազմազանության: Խեցեղենը, ըստ գործառական նշանակության, կարելի է բաժանել երկու խմբի՝ կենցաղային և ծիսական օգտագործման: Կենցաղային կամ առօրյա կիրառության խեցեղենը արտադրության հիմնական ճյուղերից էր: Ընդհանուր գտածոների մեջ խեցեղենն ամենաշատն է և ըստ այդմ աչքի է ընկնում բազմազանությամբ, ձևաբանական առանձնահատկություններով, գեղարվեստական մշակման տարբեր մոտեցումներով: Խեցեղենի կազմում կան սև, մոխրագույն, դարչնագույն, կոպիտ մշակմամբ խոհանոցային սպասքի նմուշներ:

Խեցեղենի առանձնահատկություններից մեկը զարդանախշերի առատությունն է: Զարդանախշերն առավելապես արված են անոթի միջնամասում և ուսագոտու հատվածում, չնայած որ նստուկի հատվածում նույնպես այդպիսիք կան: Խեցեղենի զարդանախշերը հիմնականում բաղկացած են կրկնվող մոտիվներից, որոնք կիրառվել են տարբեր համադրություններով: Սափորների և նմանատիպ անոթների դեպքում, որոնք բնութագրվում են երկար, կոնաձև կամ ձագարաձև վզով և գնդաձև իրանով, զարդանախշային գոտին հիմնականում գտնվում է վզի և անոթի ամենալայն հատվածի միջև: Ամենատարածված զարդանախշերն են երկրաչափական մոտիվները: Դրանց օրինակները՝ ուղիղ գծերը, երկու կամ երեք հորիզոնական գծերը տարածված են որպես հիմնական մոտիվներ: Երկրորդը եղևնազարդ և եղունգազարդ նախշերն են: Սրանք զուգահեռ գծերի և երկրաչափական պատկերների համադրություններ են: Երրորդը ալիքաձև և ցանցաձև նախշերն են: Հաճախ օգտագործվում են որպես եզրագծային կամ կենտրոնական նախշեր: Մեծ տարածում ունեն նաև արև կամ երկնային մարմիններ խորհրդանշող պատկերները: Դրանք ներառում են ճառագայթաձև գծեր, պարուրաձև նախշեր և շրջանաձև նախշեր, որոնք ներկայացնում են շարժման և պտույտի գաղափարը: Ուշագրավ է, որ բազմաթիվ խեցանոթների նստուկի վրա կարելի է տեսնել անիվի կամ արևի պատկեր: Հատկանշական է, որ մեծ մասամբ նստուկի վրա, այդ չերևացող, սակայն կենտրոնական հատվածում են պատկերել արևազարդը, գուցե խորհրդանշելու համար այն, որ ամեն ինչի կենտրոնում ընկած է արևի լույսն ու էներգիան: Մեծ տարածում ունեն նաև բուսական մոտիվները, որոնք հավանաբար խորհրդանշում են բնության հարատևությունը, պտղաբերությունը, ինչպես, օրինակ, կենաց ծառի մոտիվը, որտեղ կենտրոնական ուղիղ գծի շուրջը դասավորված են դեպի վեր ուղղված զուգահեռ նախշեր կամ բազմաճյուղ կառուցվածքներ: Տարածված է նաև եղունգազարդը, ինչպես նաև ցորենի հասկի նմանվող նախշերը:

Երկրորդ բաժնում մետաղե առարկաներն են, որոնց մեջ ներառված են բրոնզե գոտիները, զենքերի տեսականին: Դրանք հիմնականում հանդիպում են տղամարդկանց դամբարաններում և վկայում են ռազմիկի սոցիալական կերպարի կարևորության մասին: Առանձնապես տարածված են երկաթե նիզակները, դաշույններն ու դանակները, մինչդեռ սկյութական տիպի նետասլաքները վկայում են տարածաշրջանի մշակութային կապերի և արտաքին ազդեցությունների մասին: Մետաղե գտածոների մեծ և բազմազան խումբ են կազմում զարդերը: Առավել տարածված են բրոնզե ապարանջանները, որոնք ներկայացված են տարբեր ձևերով և չափերով: Դրանց շարքում առանձնանում են կենդանագլուխ՝ խոյագլուխ և օձագլուխ օրինակները: Լայն տարածում ունեն նաև մատանիները, օղերը, մանյակները, հերազարդերը, կախիկները և բրոնզե շղթաները: Այս բաժնում ընդգրկված են նաև զանգակները, ճարմանդները, շիգղը (ֆիբուլա), զարդաքորոցները, կոճակները և խողովակաձև զարդերը: Մետաղե իրերի մեջ առանձնանում են նաև ունելիները, ասեղները և այլ մանր գործիքներ:

Երրորդ խմբում քարից և այլ նյութերից պատրաստված առարկաներն են, դրանցում կան քարից, ապակենման խառնուրդներից և այլ նյութերից օրինակներ: Քարե առարկաների մեջ առանձնանում են աղորիքները, որոնք կապված են հացահատիկի մշակման և գյուղատնտեսական գործունեության հետ: Այս շարքում են նաև սրոցաքարերը և ուլունքները: Վերջիններս պատրաստված են տարբեր նյութերից՝ բնական քարերից, սարդիոնից, ստեատիտից, մածուկից, ապակուց և այլն: Հատուկ ուշադրության են արժանի ծովախեցիները, որոնք ծովից հեռու գտնվող տարածքում հայտնաբերվելով՝ վկայում են հեռահար կապերի և փոխանակման ցանցերի գոյության մասին: Դրանք հավանաբար օգտագործվել են որպես զարդեր կամ հմայական նշանակություն ունեցող առարկաներ:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն գլխում քննության են առնվում տվյալ ժամանակաշրջանի պատմամշակութային համատեքստին, տնտեսությանն ու սոցիալական կազմին վերաբերող տվյալները: Այդ տվյալները հիմնված են Շնող գետի ավազանի մ.թ.ա. I հազ. առաջին կեսի դամբարանային նյութերի բազմակողմանի ուսումնասիրության վրա:

Հասարակական հարաբերությունները պատկերացնելու համար առաջնահերթ քննարկվում է պատմամշակութային համատեքստը, ըստ որի մ.թ.ա. XII-XI դդ. մեծ փոփոխությունների ժամանակաշրջան է, որտեղ նյութական մշակույթի համալիրների հիմնական տարբերակիչ հատկանիշներից են նախորդ փուլի բրոնզե առարկաների առաջատար ձևերի աստիճանաբար անհետացումը, զինատեսակների արտադրության մեջ երկաթե արտադրանքի ավելացումը, ինչպես նաև խեցեղեն արտադրանքի ձևաբանական փոփոխությունները: Ուսումնասիրությունների արդյունքում տիրապետում է այն տեսակետը, որ լեռնաշխարհի

մշակույթները նոր, որակապես բարձր մակարդակի փուլ են մտել Ուրարտու պետության ձևավորման և նախորդ՝ բրոնզի և վաղ երկաթի դարերի մշակութային առաջընթացի հետևանքով: Գ. Արեշյանի կարծիքով, մ.թ.ա. X-VI դդ. Արևելյան Հայաստանի տարածքում ստեղծվել և զարգացել է բարձր և ինքնուրույն քաղաքակրթություն, որը գտնվում էր ուրարտական տարրի հզոր ազդեցության ներքո և սերտ կապի մեջ էր Արևմտյան Իրանի մշակույթների հետ: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ մ.թ.ա. VII–VI դդ. Հարավային Կովկասի մշակույթում առկա են երեք բաղադրիչ տարրեր՝ տեղական, ուրարտական և սկյութական: Այս տեսակետն արտահայտում է ժամանակաշրջանի մշակութային բազմազանությունը:

Ընդհանուր առմամբ այս դիտարկումները բնորոշում են տարածաշրջանում գերակա միտումները, ըստ որոնց, նշված գործոնները ներազդել են տարածքի բնակչության սոցիալական կյանքի և մշակույթի ձևավորման վրա, ինչպես նաև նախադրյալներ են ստեղծել հետագայում՝ ուրարտական պետության անկումից հետո տեղական մշակույթի զարգացման համար: Ասվածից հետևում է, որ մ.թ.ա. I հազ. կեսին Հարավային Կովկասը եղել է կարևոր ազդեցությունների գոտի, ինչն արտահայտվում է առաջին հերթին տեղական արտադրությունններին բնորոշ առարկաների կողքին նաև ակնհայտ տարբերություններով օրինակների առկայությամբ: Շնող գետի ավազանի դամբարանների գտածոները կրում են դարաշրջանին և տարածաշրջանին բնորոշ հատկանիշներ, ժամանակագրորեն այդ մշակույթը տեղավորվում է Լճաշեն-Մեծամոր IV, V և VI փուլերի սահմաններում, սակայն համաձայն նյութական մշակույթի տվյալների՝ այստեղ բացակայում է ուրարտական տարրի ուղղակի ներկայությունը: Դա հավասարապես վերաբերում է թե՛ խեցեղենին, թե՛ մետաղից արտադրանքին:

Առանցքային կետերից մեկն էլ տնտեսությունն է, որի մասին են վկայում դամբարաններում հայտնաբերված տարատեսակ առարկաները, այդ թվում աշխատանքային գործիքները: Բովեր 1 տեղամասից մեկ բրոնզե սակր և Բովեր 2 տեղամասից երկու երկաթյա կացին է հայտնաբերվել: Ենթադրում ենք, որ դրանք ոչ միայն որպես զենք են օգտագործվել, այլև իբրև աշխատանքային գործիք: Աշխատանքային գործիքների շարքում են նաև սրոցաքարերը (օր.՝ Փիջուտ, դ. № 1, № 7), մանգաղը (Փիջուտ դ. № 26), ասեղները (օր.՝ Բովեր 1. դ. № 19): Տնտեսու-թյան կարևոր ուղղություններից մեկն էլ մետաղագործությունն էր: Թեղուտ 2 տեղամասի դամբարան № 3-ից հայտնաբերված բրոնզե ապարանջանի նմուշը, ենթարկվել է ռենտգեն-ֆլուորեսցենտային անալիզի (XRF): Այդ նմուշի հետ մեկտեղ նույն մեթոդով ուսումնասիրվել է ևս երեք բրոնզե նմուշ, որոնք հայտնաբերվել են Կոթի գյուղի (Տավուշի մարզ) Կավահանք դամբարանադաշտում և քառասուն նմուշ Լոռի բերդից: Թեղուտի, Կոթիի և Լոռի Բերդի նմուշներում առկա արծաթի (Ag), նիկելի (Ni), ինչպես նաև մկնդեղի (As) և անագի (Sn) պարունակությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ չնչին տատանումներով դրանց քիմիական կազմը համադրելի է: Արդյունքները թույլ են տալիս ենթադրել, որ ինչպես Լոռի բերդի, այնպես էլ մյուս նմուշների հումքը՝ պղինձը, ստացվել է Հայաստանի տարածքում գտնվող՝ մասնավորապես Փոքր Կովկասի հանքավայրերից:

Դամբարաններում հայտնաբերված տարբեր բնույթի և գործառույթի առարկաները ծառայել են ոչ միայն թաղման ծեսին և ննջեցյալների անդրշիրիմյան կյանքի ապահովմանը, այլև արտացոլել են առկա սոցիալական շերտավորումը: Ինչպես Թալինի և Հոռոմի, այնպես էլ Շնողի ավազանի դամբարանների ուսումնասիրությունը բացահայտում է համապատասխան հասարակության շերտավորված սոցիալական կառուցվածքը, որի կազմում նկատվում է երկու հիմնական խումբ՝ համայնականներ (երկրագործ-անասնապահներ-արտադրողներ) և զինվորականներ: Համայնականների խավին են պատկանում տնտեսությամբ զբաղվողները, որոնք ապահովում են բնակչությանն անհրաժեշտ սննդի և այլ միջոցների մատակարարումը: Զինվորականների խավում համայնքի այն անդամներն են, ովքեր առնչվել են ռազմական գործին: Ռազմական խավի ներկայացուցիչների մասին մեր տվյալների հիմքը դամբարանում զետեղված զինվորական գույքն է:

Առաջին խմբում այն դամբարաններն են, որոնցում կան թաղման գույքի պարագաներ՝ խեցեղեն, զարդեր և այլն, սակայն չեն արձանագրվել զենքեր, օրինակ՝ Բաղերի ճալայում այդ դամբարանները մեծամասնություն են կազմում, քանի որ միայն չորս դամբարանում է հայտնաբերվել զենք (№ 8, № 18, № 27, № 32): Ի տարբերություն Բաղերի ճալայի, Բարձրյալում պատկերն այլ է, այն աչքի է ընկնում և՛ զենքերի, և՛ զինվորական տարրին պատկանող ատրիբուտների առկայությամբ (գոտի, բրոնզե ծայրակալ), այնտեղ 30 դամբարանից զենք պարունակում է՝ 11 դամբարան (№ 2, 3, 5, 9, 11, 18, 41, 42, 79, 92, 107): Բովեր 1-ում նույնպես զենք պարունակող դամբարանները մեծամասնություն չեն կազմում, 27 դամբարանից 5-ում են հայտնաբերվել (№ 19, 31, 43, 54, 59): Պատկերը փոքրինչ փոխվում է ավելի ուշ փուլի դամբարաններում, Բովեր 2 և Փիջուտ դամբարանադաշտերի պարագայում զենքերի առկայությունը համեմատաբար ավելի շատ է: Բովեր 2-ում 14 դամբարանից զենք պարունակում են հինգ դամբարանում (№ 1, 4, 11, 20, 21), իսկ Փիջուտում՝ 10 դամբարանից վեցում (№ 1, 5, 7, 13, 20, 26): Հետաքրքիր է Շեկ աղբյուրի տեղամասի պատկերը, որտեղ ընդամենը չորս դամբարանից երեքում՝ № 1, № 3 և № 4-ում հայտնաբերվել են մեկ նիզակ և երկու բրոնզե գոտի: Ընդհանուր առմամբ զենք փաստագրվել է 32 դամբարանում (ևս երկու դամբարանում կան առանց զենքի առկայության գավազանի գլուխ (Բարձրյալի № 41) և բրոնզե գոտի (Շեկ աղբյուր № 4)), որը կազմում է ընդհանուր դամբարանների 24,2 %-ը:

Մ.թ.ա. XIII դարի վերջից և XII սկզբից ի հայտ եկող այսպես կոչված «զինվորի» թաղումները վկայում են սոցիալական նոր խավի ձևավորման մասին: Վերջիններս ներկայանում են հասարակ և որոշակի բարձր դիրք զբաղեցնող էլիտայով, որոնց սոցիալական դիրքի ցուցիչ-օրինակ են շքեղ զարդարված զենքերը, բրոնզե գոտիները, փայտե կոթառով գավազանի գլուխները, որոնք, ընդունված տեսակետի համաձայն, հասարակության մեջ բարձր սոցիալական կարգավիճակի և իշխանության խորհրդանիշ են համարվել: Նշված առանձնահատկությունները հատկապես տեսանելի են Բաղերի ճալայի, Բարձրայլի, Փիջուտի, Շեկ աղբյուրի դամբարանների պարագայում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով Շնող գետի ավազանի մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսի դամբարանային համալիրների բազմակողմանի քննության արդյունքները՝ կարելի է ձևակերպել հետևյալ հիմնական եզրահանգումները.

1. Շնող գետի ավազանի հնագիտական տվյալների համադրական վերլուծությունը վկայում է, որ ուսումնասիրվող տարածաշրջանը հանդիսացել է կուրարաքսյան հաղորդակցական «միջանցքի» կարևոր հանգույցներից մեկը՝ զբաղեցնելով նշանակալի տեղ Հարավային Կովկասի մշակութային համակարգում: Դամբարանային համալիրներից ստացված նյութական մշակույթի նմուշների քանակական վերլուծությունը (ընդհանուր՝ 1261 միավոր, ներառյալ խեցեղեն՝ 855, մետաղական առարկաներ՝ 374 և այլ նյութերից պատրաստված առարկաներ՝ 32) թույլ է տալիս բնութագրել տարածաշրջանը որպես ակտիվ տնտեսական և արտադրական կենտրոն, որի ձևավորմանը նպաստել են տեղական հանքահումքային ռեսուրսները, մասնավորապես Շնող-Կողբի ինտրուզիայի պղնձի և երկաթի հանքավայրերը:

2. Դամբարանային նյութերի տիպաբանական և համեմատական քննությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող համալիրները պատկանում են Լճաշեն–մեծամորյան մշակութային շրջանակին՝ երկաթի դարին յուրահատուկ գույքային կազմով: Ամենավաղ թաղումները վերաբերում են մ.թ.ա. XII–XI դարերին և առավելապես կենտրոնացված են Բաղերի ճալայի ենթագոտում: Տարածքի առավել ինտենսիվ բնակեցումը վերաբերում է զարգացած երկաթի դարին, որի ընթացքում ձևավորվում է դամբարանադաշտերի լայն ցանց: Դամբարանների տեղաբաշխման առանձնահատկությունները վկայում են սեգմենտավորված, սակայն միասնական սոցիալական կառուցվածք ունեցող հասարակության գոյության մասին:

3. Տարածական և ժամանակագրական տվյալների համադրությունը ցույց է տալիս, որ մ.թ.ա. I հազարամյակի սկզբին տարածաշրջանում արձանագրվում է բնակեցման համակարգի էական վերակազմավորում: Բնակավայրերի տեղադրումը բարձրադիր և բնականորեն պաշտպանված դիրքերում պայմանավորված է ինչպես բնաշխարհագրական, այնպես էլ ռազմաքաղաքական գործոններով, ինչը հանգեցրել է պաշտպանական հնարավորությունների ուժեղացմանը: Դամբարանադաշտերն իրենց հերթին, հանդես են գալիս ոչ միայն որպես թաղման վայրեր, այլև որպես տարածքի կազմակերպման, վերահսկման և սիմվոլիկ յուրացման գործիքներ՝ ձևավորելով «հսկվող լանդշաֆտ»: Դրանց տեղակայումը՝ տեսանելիության բարձր աստիճան ունեցող և հաղորդակցական ուղիները վերահսկող դիրքերում, ընդգծում է վերջիններիս դերը տարածքային սահմանանշման և համայնքային ինքնության կառուցման գործընթացում:

4. Դամբարանադաշտերի տեղադրումը բնակավայրերի անմիջական հարևանությամբ, առանձնացված՝ հիմնականում բարձրադիր լանջային գոտիներում, վկայում է լանդշաֆտի ֆունկցիոնալ բաժանման մասին՝ բնակելի (տնտեսական) և սրբազան (ծիսական) ոլորտների: Այս բաժանման մեջ առանցքային

դեր է խաղացել ջրագրական ցանցը, որը ծառայել է որպես սահմանազատող, բայց նաև ինտեգրող գործոն: Կլաստերային վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Շնող գետը նպաստել է դամբարանադաշտերի սոցիալ-տարածական բաժանմանը, մինչդեռ կենտրոնական հատվածներում նույն համակարգը խթանել է խոշոր՝ «մեգակլաստերային» միավորների ձևավորմանը:

5. Կառուցվածքային առումով դամբարանները դրսևորում են բարձր աստիճանի միատարրություն՝ ուղղանկյուն հատակագծով քարարկղային խցեր, համադրելի չափեր և համանման շինանյութի օգտագործում: Դրանց տարածական կազմակերպումը հաճախ ունի կանոնավոր (մասնավորապես՝ շախմատաձև) բնույթ, ինչը վկայում է թաղման ծեսի ստանդարտացված և երկարատև պահպանված ավանդույթի մասին:

6. Թաղման ձևերի բազմազանությունը՝ ներառյալ ինհումացիան, դեկարնացիան, կենոտաֆ թաղումները, «մասնակի դիակիզումը» և կենդանական թաղումը, արտացոլում են մահվան և հանդերձյալ աշխարհի վերաբերյալ բազմաշերտ և համալիր հավատալիքային համակարգը:

7. Մետաղական գույքի վերլուծությունը ցույց է տալիս, որ մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսին տարածաշրջանում աստիճանաբար մեծանում է երկաթի դերը՝ հատկապես զենքի արտադրության ոլորտում: Երկաթե զենքի քանակը էականորեն գերազանցում է բրոնզե օրինակներին, մինչդեռ բրոնզե իրերը հաճախ առանձնանում են բարձրարվեստ մշակմամբ և հիմնականում հանդիպում են սոցիալապես առանձնացված («էլիտար») դամբարաններում: Այս փաստերը վկայում են երկաթի արտադրության առաջնահերթության մասին և թույլ են տալիս դիտարկել ուսումնասիրվող գոտու արտադրական համակարգը տարածաշրջանային համաժամանակյա կենտրոնների համատեքստում:

8. Թաղման գույքի անհամաչափ բաշխումը և զենքի ի հայտ գալու հաճախականությունը վկայում են սոցիալական կառուցվածքի բարդացման և հիերարխիզացիայի մասին: Առկա տվյալները ենթադրում են ռազմականացված վերնախավի ձևավորում և պրոֆեսիոնալ ռազմիկների դերակատարության աճ: Սոցիալական շերտավորման մասին են վկայում նաև այլ ատրիբուտներ, մասնավորապես կնքադրոշմները, որոնք կարող են կապված լինել իշխանության, ինքնության, տնտեսական գործունեության կամ փոխանակման համակարգերի հետ:

9. Վերջապես, նյութական մշակույթի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեղական ավանդույթները համակցվել են արտաքին ազդեցությունների հետ՝ արտացոլելով տարածաշրջանի ակտիվ ներգրավվածությունը միջտարածաշրջանային փոխհարաբերություններում: Նմանություններն ինչպես հարակից շրջանների (Լոռի, Տավուշ), այնպես էլ ներկայիս Վրաստանի ու Ադրբեջանի տարածքից հայտնաբերված հնագիտական նյութերի հետ վկայում են մշակութային ինտենսիվ կապերի մասին: Ակնհայտ է, որ Քուռ և Դեբեդ գետերի հովիտները մ.թ.ա. II հազարամյակի վերջում և I հազարամյակի սկզբում Հարավային Վրաստանի (հատկապես Իորիի ավազանի) և Ադրբեջանի հյուսիսարևմտյան շրջանների հետ ինտեգրված են եղել ընդհանուր մշակութատնտեսական համակարգում:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՏԱՑՈԼՎԱԾ Է ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ


1. **Սարատիկյան Ա.** 2021, Ուշագրավ թաղում Բովեր դամբարանդաշտում, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 255-263:

2. **Սարատիկյան Ա.** 2024, Ջրօգտագործման համակարգը Շնող գետի ավազանում (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), «Ջրօգտագործման մշակույթը Հայաստանում հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» (խմբ. Ա. Բոբոխյան, Ռ. Հովսեփյան), ԱԻԿԱ-Արմենիա ժամանակակից արվեստի ինստիտուտի հրատ., Երևան, էջ 106-116:

3. **Սարատիկյան Ա.** 2025, Շնողի հնավայրերից հայտնաբերված ուլունքների և մանր զարդերի տիպաբանությունը (մ.թ.ա. I հազ. առաջին կես), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 215-225:

4. Худавердян А., Обосян С., **Саратикян А.** 2020, Антропологические материалы эпохи поздней бронзы и раннего железного века из могильника Барцрял (провинция Лори, Армения), «Экология древних и традиционных обществ», Выпуск 6, 2–6 ноября 2020 г., Тюмень, стр. 419-422.

5. Khudaverdyan A., Yengibaryan A., Hobosyan S., Hovhanesyan A., **Saratikyan A.** 2019, An Early Armenian female warrior of the 8–6 century BC from Bover I site (Armenia), "International Journal of Osteoarchaeology", 30 (1), pp. 119-128. (Scopus)

6. Khudaverdyan A., Hobosyan S., **Saratikyan A**. 2021, Bioarchaeological evidence for the health status of a late bronze and early iron ages Bover population (Armenia), "Anthropologie", 59 (1), pp. 55-78. (Scopus)

7. **Saratikyan A**. 2022, The Tombs of Warriors According to The Data of The Cemetery of Bardzrial (Late II Millennium-First Quarter Of I Millennium BC), «Բանբեր հայագիտության», № 2, էջ 105-117:

8. **Ani Saratikyan** 2024, Typical finds of Scythian culture from the Pijut cemetery (Lori, Armenia), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, էջ 261-271:

9. **Saratikyan A.** 2026, Newly Discovered Stamp Seals from the North of Armenia. In: H. Meller, A. Bobokhyan, F. Knoll & R. Davtyan (eds.), Archaeology in Armenia III. Cooperation Projects of the State Saxony-Anhalt–Reports and Additional Selected Studies/Հնագիտությունը Հայաստանում III: Սաքսոնիա-Անհալտ երկրամասի համագործակցության ծրագրերը-հաշվետվություններ և առանձին հետազոտություններ, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen-Anhalt, Halle (Saale), pp. 71-86.

## САРАТИКЯН АНИ АНДРАНИКОВНА
## БАССЕЙН РЕКИ ШНОХ В ЖЕЛЕЗНОМ ВЕКЕ
## (ПО НОВЫМ АРХЕОЛОГИЧЕСКИМ ДАННЫМ)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук
по специальности 07.00.03 «Археология»
Защита состоится 4 августа 2026 г. в 14:00 ч., на заседании
специализированного совета 007 по археологии и этнографии КВОН,
действующего при Институте археологии и этнографии НАН РА
(адрес: 0025, г. Ереван, ул. Чаренца 15)

### Резюме

Диссертация посвящена комплексному исследованию погребальных комплексов бассейна реки Шнох, датируемых концом второй половины II тысячелетия до н. э. и первой половиной I тысячелетия до н. э. Основной целью исследования является изучение особенностей погребального обряда и межрегиональных взаимодействий.

Источниковую базу работы составляют предметы, обнаруженные в 131 погребальном комплексе из различных могильников бассейна реки Шнох. Всего было проанализировано 1261 археологическое изделие, в том числе 855 керамических, 374 металлических и 32 предмета, изготовленных из других материалов. Их анализ показал, что в конце II тысячелетия до н. э. и в первой половине I тысячелетия до н. э. исследуемая территория являлась одним из важных культурных, экономических и коммуникационных центров Южного Кавказа. Развитию региона способствовали как благоприятные природно-географические условия, так и богатые минеральные ресурсы Шнох-Кохбской интрузии, прежде всего месторождения меди и железа. Типологический и сравнительный анализ погребальных материалов показал, что археологические комплексы бассейна реки Шнох относятся к лчашенско-мецаморскому культурному кругу. Наиболее ранние погребения датируются XII–XI вв. до н. э., тогда как наиболее интенсивный этап заселения и хозяйственной активности относится к развитому железному веку. В этот период формируется разветвлённая сеть могильников, свидетельствующая о росте численности населения и усложнении социальной структуры общества. Пространственный анализ показал, что в начале I тысячелетия до н. э. в регионе произошла существенная реорганизация системы расселения. Поселения преимущественно размещались на возвышенных и естественно защищённых участках, что было обусловлено как хозяйственными, так и военно-политическими факторами. Могильники, в свою очередь, выполняли не только погребальную функцию, но и играли важную роль в территориальной организации и формировании коллективной идентичности. Их расположение нередко было связано с контролем над коммуникационными путями и символическим освоением окружающего ландшафта.

Результаты исследования свидетельствуют о том, что распределение поселений и могильников подчинялось определённым закономерностям, в формировании которых важную роль играла река Шнох. С одной стороны, она служила естественной границей, а с другой - способствовала поддержанию контактов между различными общинами. Кластерный анализ показал, что речная система одновременно способствовала как социально-пространственной дифференциации, так и формированию крупных поселенческих объединений.

Разнообразие погребальных практик проявляется в наличии ингумации, декарнации, кенотафных погребений, «частичной кремации» и захоронений животных. Это свидетельствует о сложной и многослойной системе представлений о смерти и загробном мире. В то же самое время изучение погребального инвентаря позволило реконструировать отдельные особенности социальной организации населения. Анализ металлических изделий показал значительный рост использования железа в рассматриваемый период, особенно в производстве оружия. Железное оружие количественно преобладает над бронзовыми образцами, тогда как бронзовые изделия отличаются высоким качеством изготовления и чаще встречаются в наиболее богатых погребениях. Эти данные свидетельствуют о развитии производственной системы, углублении ремесленной специализации и широком распространении железных технологий. С точки зрения социальной организации погребальные материалы отражают постепенное усиление процессов социальной стратификации. Неравномерное распределение погребального инвентаря, частое присутствие оружия и особое богатство отдельных погребений позволяют предполагать формирование военизированной элиты. Сравнительный анализ показал, что материальная культура бассейна реки Шнох развивалась в условиях взаимодействия местных традиций и внешних влияний. Сходство археологических материалов с комплексами Лори, Тавуша, а также территорий современной Грузии и Азербайджана свидетельствует об интенсивных культурных и экономических контактах. Долины рек Куры и Дебеда функционировали как важные коммуникационные коридоры, обеспечивавшие интеграцию региона в единую культурно-хозяйственную систему Южного Кавказа. Приложения к диссертации включают координатные данные могильников, перечни археологических признаков, таблицы орнаментальных мотивов, радиоуглеродные датировки, статистические диаграммы, карты, а также материалы раскопок (фотографии, чертежи и обмеры погребений и находок), дополняющие и подтверждающие ос-новные выводы исследования.

**SARATIKYAN ANI ANDRANIK**
**THE BASIN OF SHNOGH RIVER IN IRON AGE**
**(ACCORDING TO NEWLY DISCOVERED ARCHAEOLOGICAL DATA)**

Dissertation for the degree of PhD of History
on the specialization "Archaeology" 07.00.03
The defense of the dissertation will be held on August 4, 2026, at 14:00 at the session of the Specialized Council 007 on Archaeology and Ethnography of HESC by the Institute of Archaeology and Ethnography of the National Academy of Sciences of RA (address: 0025 Yerevan, 15 Charents st.)

**Summary**

The present dissertation is devoted to a comprehensive study of the burial complexes of the Shnogh River basin, dating to the latter half of the 2nd millennium BC and the first half of the 1st millennium BC. The primary objective of the research is to investigate the characteristics of the funerary practices, and patterns of inter-regional interactions. To this end, archaeological, spatial, and statistical methods are integrated into the analysis.

The research is based on 1,261 archaeological artefacts recovered from 131 burial complexes at various cemeteries of the Shnogh River basin, including 855 ceramic vessels, 374 metal objects, and 32 artefacts made of other materials. Their analysis demonstrates that during the late 2nd millennium BC and the first half of the 1st millennium BC, the study area constituted one of the major cultural, economic, and communication centres of the South Caucasus. The development of the region was facilitated by two key factors: first, its favourable natural and geographical conditions, and second, the rich mineral resources of the Shnogh-Koghb intrusion, particularly its copper and iron deposits. Typological and comparative analyses of the funerary assemblages indicate that the archaeological complexes of the Shnogh River basin belong to the Lchashen-Metsamor cultural horizon. The earliest burials date to the 12$^{th}$-11$^{th}$ centuries BC, whereas the most intensive occupation and economic activity belongs to the Developed Iron Age. During this period, an extensive network of cemeteries emerged, reflecting demographic growth and increasing social complexity. Spatial analysis proves that the region underwent a significant reorganization of its settlement system at the beginning of the 1st millennium BC. Settlements were predominantly established in elevated and naturally defensible locations, reflecting both economic and military-political considerations. Cemeteries functioned not only as places of burial but also as important instruments of territorial organization and expressions of collective identity. Their placement was always associated with the control of communication routes and the symbolic appropriation of the landscape. The results of the study indicate that the distribution of settlements and cemeteries followed distinct spatial patterns, in which the Shnogh

River played a crucial role. It was both as a natural boundary and as a zone of interaction between different communities. Cluster analysis demonstrates that the river system contributed to socio-spatial differentiation and the formation of larger settlement units. Structural analysis of the burials reveals the predominance of rectangular stone-cist graves. Their spatial arrangement reflects a long-standing and stable funerary tradition. The diversity of burial practices is evident in the presence of inhumation, decarnation, cenotaph burials, partial cremation, and animal burials. This diversity points to a sophisticated and multifaceted system of beliefs concerning death and the afterlife. The study of grave goods has also provided valuable insights into the social organisation of these communities. Analysis of metal artefacts demonstrates a significant increase in the use of iron during the period under study, particularly in the production of weapons. Iron weapons clearly outnumber bronze examples, whereas bronze artefacts are characterised by their high-quality craftsmanship and occur more frequently in wealthier burials. These observations indicate the development of production systems, increasing craft specialisation, and the widespread adoption of iron technology.

The funerary evidence reflects a gradual process of social stratification. The unequal distribution of grave goods, the frequent occurrence of weapons, and the exceptional richness of certain burials suggest the emergence of a militarised elite. Comparative analysis indicates that the material culture of the Shnogh River basin developed through the interaction of local traditions and external influences. Similarities with archaeological assemblages from Lori, Tavush, as well as present-day Georgia and Azerbaijan point to intensive cultural and economic contacts. The valleys of the Kura and Debed rivers served as key communication corridors, integrating the region into the broader cultural and economic system of the South Caucasus. The appendices of the dissertation include the coordinates of the cemeteries, lists of archaeological features, tables of decorative motifs, radiocarbon dates, statistical charts, maps, excavation plans, as well as photographs, drawings, and measurements of burials and artifacts. Together, these complement and substantiate the principal conclusions of the study.